

ՏՂԱՐԵՐԻ ԵՒ ԿՆՈՒՆԻ

Առանց որևէ նախազգուշութեան և կամ առանց ազատութեան աշխատանքի ծանր լուծից՝ անցնում են Սիսիանցի կնոջ լղութեան օրերը: Գալիս են երկուների ժամերը. կանչւում է տատմէրը (մանկաբարձուհի), որ մի աթար է գնում, վրան շոր ձգում, ինքը վրան բազմում ու ծննդականին նստեցնում իւր ծնկների վրայ: Ապա ամենայն ուժով սեղմում է ծննդականի լետուքը, և երբ երեխան ծնւում է՝ ինքը բարձրանում է տեղից, ծննդականին նստեցնում իւր տեղը և առանց մոռանալու որևէ նուէր ստանալ տնեցիներից՝ կտրում է երեխայի պորտը: Անմիջապէս մի փոքրիկ թաղիք են ձգում, որի առաջ տաք մօխիւր ցանում և ծննդականին վրան պտուկեցնում են այնպէս, որ ներքին մասերը մօխիւրի վրայ գան. շուտ-շուտ էլ մօխիւրը նորոգում են: Չեն մոռանում նաև ծննդականի շուրջը շամփուրով գիծ քաշել, որպէս զի չարերը չմօտենան:

Եթէ ծննդականը ուշաթափւում է՝ հրացան են արձակում, «Մայրամ, Մայրամ» են գոչում, երեսին ջուր սրըսկում: Երբ ուշքի է գալիս՝ դազը (այծի մազից գործած պտան) են տալիս ձեռքը, որ քանդէ:

Եթէ տղաբերքը դժուար է լինում՝ կանչում են միին, որ Արաքսը անց է կացել, որպէսզի սա իւր փէշով ջուր տալ ծննդականին: Եւ կամ այծի մազ են եփում և քիչ հովացնելուց լետոյ քաշում ծննդականի փորին:

Եթէ երեխան շնչասպառ է ծնւում՝ նրան դնում են տաք ջրի մէջ և պորտը ոլորում, որ կենդանանալ:

Նորածնին անմիջապէս լողացնում են, վրան աղ ցանում և ապա փաթաթած՝ տատմէրը տանում կտրովը պտույտ է

տալիս, դարձնում գէպի արևելք, ազօթում և բերում ներս: Ապա մօրն է լողացնում, պառկեցնում և երեխան դնում նրա աջ կողմը:

Այս ծանր գործից ազատուելուց լետոյ տատմէրը վերցնում է պորտը և տանում՝ եթէ նորածինը արու է՝ պորտը գոմն է ձգում, որպէսզի երեխան անասնապահ լինի, իսկ եթէ աղջիկ՝ տան անկիւնը, որպէսզի ամօթիած և տնտես դառնայ: Ապա վազում է տնեցիներին և բարեկամներին աչքալուսանք», որոնցից ստանում է 10—20 կ. նուէր: Արու զաւակ լինելիս ուրախութիւնը անհամեմատ մեծ է լինում. մինչդեռ աղջիկը, մանաւանդ երբ արգէն մի քանիսը կան՝ բաւական տխրութիւն է պատճառում:

Սանամայրը, ազգականները, մօտիկ հարևանները, աչքալուսանքն ընդունելով՝ շտապում են գալ տեսնելու ծննդականին և իրենց հետ բերում են ծննդկագաւաթ, որ բաղկանում է կամ ձուաձեղից և կամ շփոթից ^{*)}:

Ծննդկագաւաթ բերողն ասում է. «Աչքդ լիս, Աստուած մէջքդ կանանչ պահի, համաշտ (միշտ) տղայ բերես: Իսկ եթէ աղջիկ է՝ Աստուած գլխին էլ տղայ տալ:

Ծննդականին առաջի օրը տալիս են զանճաֆիլով (կինամոն) կամ սև պղպեղով թէյ և ձուաձեղ. իսկ նորածնին ոմանք այդ օրը բոլորովին չեն կերակրում, որպէսզի համբերող լինի: Եւ որովհետև ծննդականին անուրբ են համարում՝ ուստի նրա բաժակը, ամանը և գդալը որոշում և առանձին են պահում և չեն թոյլ տալիս, որ ինքը իւր ձեռով որևէ բան վերցնէ: Նա ինքն էլ երբէք ոչինչ չի վերցնի և երկար քաղցած կը մնայ, մինչև որ մինը նրան բան տալ: Տունը սրբելու համար քահանային կանչում են, որ «փարատէ», իսկ ամանները առանձին պահում, որ մեռ-

*) Այս կերակուրը պատրաստում են այսպէս. տաք ջրի մէջ ալիւր են լցնում և կրակի վրայ դրած խառնում, մինչև որ պնդանում և կարմրում է. լետոյ ածում են մի ափսէի մէջ, մի փոս անում մէջ տեղում և իւղ ածում. շուրջն էլ շաքարի մանրուք ցանում:

նաջրով լուանան, սրբեն: Ծննդականի զլիտ տակ էլ Նարեկ, Սաղմոս, սուր, գաշտին, շամփուր են դնում, որպէսզի չարերը սրանցից երկիւղ կրելով՝ չմօտենան ծննդականին:

Երեխային տատմէրը ամեն օր լողացնում է: Դնելով մի ձեռը երեխայի գլխին, իսկ միւսի ցուցամատը նրա բերանը՝ երեք անգամ կոխում է երեխային շուրը և ասում.

Երկընամըզիկ,

Թափ տայ ջրիկ,

Վերցայ մսիկ:

Երեք օրից յետոյ էլ, մի երեքշաբթի, հինգշաբթի և կամ շաբաթ օր, տատմէրը գալիս և ծննդականին է լողացնում:

* *

Մկրտութիւնը կատարւում է երեք կամ չորս օրից յետոյ: Նախընթաց օրը տատմէրը դնում հրաւիրում է քաւորին, տանելով մի երկու հաց, մի զօլդ գաթայ, կէս շիշ օղի, երբեմն էլ մի խաշած հաւ: Սա էլ հինգ ֆունտաչափ աղ կամ ալիւր, ձաւար, բրինձ և կամ բուրդ է տալիս տատմէրին նուէր: Յետոյ բերում է կէս արշին կտաւ, որ կոչւում է կնկուղ, և անց է կացնում երեխայի գլուխը, մի սաւան, այսինքն մի արշին կարմիր չիթ, որ երեխայի վրան ձգեն եկեղեցուց տուն բերելիս, և նշանակեալ ժամանակին դնում է եկեղեցի: Տատմէրն էլ մի քանի մօտիկ ազգականների հետ երեխան է բերում: Հօրը արգելւում է այս միջոցին եկեղեցի գալ: Քահանան տան ըսպէս մկրտում է երեխային և շոյս ի լուսոր շարականն ասելով՝ բերում տուն: Այժմեան քահանաների կարգադրութեամբ ծննդականը վեր է կենում իւր տեղից, կանգնում, կռանում համբուրում քաւորի ոտը և ապա առնում երեխային ու նստում: Այստեղ հրաւիրուած են լինում տղամարդ և կին ազգականներ, որոնք շուտով ճաշի են նստում: Նախ ճաշում են տղամարդիկ, ըսլորովին առանձին, յետոյ կանայք, նոյնպէս առանձին: Ծաշին մատուցանում են երկու-երեք տեսակ պատահական կե-

բակուրներ, որովհետև կնունքի յատուկ կերակուրներ որոշուած չկան:

Երեք օրից յետոյ տատմէրը նորից է գալիս և երեխային մեռնոյց հանում: Այս անգամ երեխային լուսնում են մի մաքուր ամանի մէջ, սրբում են մօր ստինքները, լուսնում կնկուղը և ջուրը ածում են կամ թոնրի և կամ գետի մէջ:

Հինգ-վեց օրից յետոյ ծննդականը վեր է կենում, առնում է ձեռքը մի թոնրի շիշ (երկաթի ձող) և Յիսուս Քրիստոսն ասելով դուրս գալիս:

Այնուհետև մայրը ինքն է խնամում և լողացնում երեխային, ուտի և ճանապարհ են ձգում տատմէրին, տալով հնգական ֆուռա աղ և ալիւր, 1—2 ֆ. ձաւար, կէս ֆուռա բրինձ և գուցէ մի քանի կոյէկ. այս բոլորը նախապէս պրտտեցնում են ծննդականի գլխով:

*
* *

Եթէ երեխան կոխւում է, այսինքն լղարում և նուագում է՝ առողջացնելու նպատակով տատմէրը եօթը հաւից մի-մի փետուր է փետում և եօթը գոյնի թել առնելով երեխան գրկած բարձրանում է կտուրը և հերթիկից կանչում. «Լստրա քառսունքը կտրեմ»: Տնից պատասխանում են. «Կըտրիր»: Այս հարցը երեք անգամ տալուց յետոյ՝ փետուրները և թելը դնում է երեխայի ոտի տակ և կոտորում:

Նոյն նպատակով մի չորեքշաբթի, ուրբաթ և կամ կիրակի երեկոյ երեխայի բարձի տակ դնում են շիպ (Alemerudum), որը յետոյ ձգում են թոնիր: Ասում են, թէ այս շիպը ստանում է այն կենդանու պատկերը, օրից յառաջացել է կոխը: Յետոյ հանում են այդ շիպը, դնում տաշտի մէջ և երեխային վրան լողացնում:

Եւ կամ հաւի առաջին ձուն դատարկում, նրանով քառասուն ջուր են չափում, տաքացնում և լցնում ծննդականի գլխին:

Լուսնով ընկածի համար դնում են Բռնակոթ Մելքոնց

«Չաղը և տանելով մի արծաթ գրամ խնդրում «լիսին» կը-
տրել: Այս գերգաստանի անդամներից մէկն ու մէկը վերցնում
է գրամը, մի կողքից կտրում է, մնացածի վրայ կանթ շի-
նում և վերադարձնում, որ երեխայի վրայից կտրեն:

Եթէ երեխան շատ է լաց լինում՝ մայրը պատառում է
նրա շորերը և դէն ձգում, ասելով. «Էս ա քու փայրք» (բա-
ժինք): Ապա թռնրի շիշով (ձող) գծում է օրօրոցի շուրջը և
դադրելով (այծի մագի պարան) կապում օրօրոցի լուծը:

Ձանազան հուլունքներ են կապում բալուլի վրայ, որ
երեխային աչք չտան:

Առաջին ատամներն հանելիս՝ «կեղքահատիկ» են անում:
Խաշած ցորենի հետ խառնում են քիշմիշ, շաքարի մանրուք,
լապլապու և ածում մանկան գլխին: Այս միջոցին երեխայի
առաջ դնում են մի դանակ և մի սանր: Եթէ առաջ նա դա-
նակը վերցնէ՝ գրանից գուշակում են որ մի եղբայր է ու-
նենալու, իսկ եթէ սանրը՝ մի քույր:

